

**«ՀՀ 2019 թվականի պետական բյուջեում
վերաբաշխում, ՀՀ կառավարության 2018 թվականի
դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման մեջ
փոփոխություններ կատարելու և Հայաստանի
Հանրապետության տրանսպորտի, կապի և
տեղեկատվական տեխնոլոգիաների
նախարարությանը գումար հատկացնելու մասին»**

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 2019 թվական N ____ -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի
մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետը և 23-րդ հոդվածի 3-րդ մասը՝
Կառավարությունը որոշում է.

1. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2
աղյուսակում կատարել վերաբաշխում, N 1 հավելվածի N 3 աղյուսակում
և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի
դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի
պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N
1515-Ն որոշման NN 3, 4, 11 և 1 հավելվածներում կատարել
փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2 ,3 և 4
հավելվածների:
2. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և

տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից՝ 2019 թվականի առաջին կիսամյակում հատկացնել 7,177,6 հազար դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով: